# ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ՝ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՂՈՒԿԱՍ 2:39-40, 46-47

*39 Եվ երբ ամեն բան Տիրոջ օրենքի համաձայն կատարեցին, վերադարձան Գալիլեա՝ իրենց
Նազարեթ քաղաքը: 40 Իսկ մանուկն աճում էր ու զորանում՝ __լի__ __իմաստությամբ__, և Աստծու
շնորհը նրա վրա էր:*

*46 Երեք օր հետո նրան գտան տաճարում վարդապետների մեջտեղում նստած. __**լսում էր**__
նրանց ու __**հարցեր տալիս**__: 47 Բոլոր նրան լսողները զարմանում էին նրա իմաստության ու
պատասխանների վրա:*

> *Մատթեոս 13:54 – Նա եկավ իր հայրենի քաղաքը և ուսուցանում էր նրանց ժողովարանում, այնպես որ նրանք զարմանում էին ու ասում. Որտեղի՞ց սրան այս իմաստությունն ու հրաշագործ զորությունը:*

## I. Ի՞ՆՉ Է ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՒՄ:

*...__**լսում էր**__ նրանց ու __**հարցեր տալիս**__:*

***Jesus is the question. (Martin Copenhaved)***

- ***Այս գրքում Հիսուսը տալիս է 307 հարց:***
- ***Նրան տրվում է 183 հարց, որոնցից նա պատասխանում է միայն 3-ին:***
- ***Կարծում եմ՝ Հիսուսն ավելի շատ հարցեր տվել, քան Սոկրատեսը:***

*Եվ նա ասաց նրանց. Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտեի՞ք, որ ես պետք է իմ Հոր տանը լինեմ (Ղուկաս 2:49):*

*Մարդիկ ի՞նչ են ասում իմ մասին. ո՞վ է Մարդու Որդին: Նրանց ասաց. Իսկ դո՞ւք ինչ եք ասում իմ մասին. ո՞վ եմ (Մատթեոս 16:13, 15):*

*Դուք իմ խոսքերն ինչո՞ւ չեք հասկանում. (Հովհաննես 8:43):*

*Ո՞ւր է ձեր հավատը (Ղուկաս 8:25):*

*Այդպես, մեկ ժամ է՞լ չկարողացաք ինձ հետ արթուն մնալ (Մատթեոս 26:40):*

*Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ (Մատթեոս 27:46):*

*Երրորդ անգամն ասեց նորան. Սիմոն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ (Հով. 21:17):*

- ***Աստված Ադամին մի քանի հարց է տալիս Եդեմի պարտեզում:***

*Ծննդ. 3:9-13 - **9** Եւ Եհովայ Աստուածը կանչեց Ադամին, եւ ասեց նորան, Ո՞ւր ես. **10** Եւ նա ասեց. Քո ձայնը լսեցի պարտէզումը, եւ վախեցի, որովհետեւ ես մերկ էի, եւ թաք կացի: **11** Եւ ասեց. Ո՞վ պատմեց քեզ, թէ դու մերկ ես, արդեօք այն ծառիցը, որի համար քեզ պատուիրեցի որ նորանից չուտես, կերա՞ր: **12** Եւ Ադամն ասեց. Այն կինը, որ ինձ հետ տուիր, նա տուաւ ինձ այն ծառիցը, եւ ես կերայ: **13** Եւ Եհովա Աստուածն ասեց կնոջը. Դա ի՞նչ ես արել: Եւ կինն ասեց. Օձն ինձ խաբեց, եւ ես կերա:*

## II. ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՐ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է:

- ***Առանց Քրիստոսի ոչինչ չեք կարող անել:***

*1 Կոր. 1:24,30 - **24** Բայց այն կանչուած Հրէաներին եւ Յոյներին, Քրիստոսը քարոզում ենք Աստուծո զօրություն եւ Աստուծո իմաստություն: **30** Եւ դուք նորանից էք Յիսուս Քրիստոսում՝ որ Աստուածանից մեզ համար եղավ <u>իմաստություն</u>, եւ <u>արդարություն</u> եւ <u>սրբություն</u> եւ <u>փրկություն</u>:*

- ***Սողոմոնը հասկացավ իմաստության արժեքը:***

*Առակաց 24:3 – Տունն <u>իմաստությամբ</u> է շինվում և <u>խոհեմությամբ</u> է հաստատվում:*

- ***Խորանը կառուցվել է Աստծո իմաստությամբ:***

*Ելից 31:3 – Եվ լցրեցի նրան Աստծու Հոգով՝ իմաստությամբ, հանճարով, գիտությամբ և ամենայն ճարտարությամբ...*

*3 Թագ. 3:9-10 - **9** Ուրեմն իմաստությո՛ւն տուր քո ծառային՝ քո ժողովրդին դատելու, բարին ու չարն իրարից զանազանելու, որովհետև ո՞վ կարող է դատել քո այս մեծ ժողովրդինե: **10** Տիրոջը հաճելի եղավ այդ խոսքը, որ Սողոմոնը խնդրեց:*

## III. ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ՄԻԱՅՆ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆ:

*Հակ. 1:5 - Բայց եթե ձեզանից մեկն իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուն,, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չի նախատում, եւ կ'տրվի նորան:*

*Եփ. 1:17 - որպեսզի մեր Տեր Յիսուս Քրիստոսի Աստվածը՝ փառքի Հայրը, իրեն ճանաչելու համար տա ձեզ իմաստության և հայտնության հոգի:*

*Կող. 1:9 - Նորա համար մենք էլ այն օրից երբ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթելուց եւ Աստծուն աղաչանքներ մատուցելուց որպեսզի լցվեք նորա կամքի գիտությամբ, ամեն իմաստությունով եւ հոգեւոր հանճարով.*

*Դան. 2:20-22 - **20** Դանիէլը խօսեց եւ ասեց. Օրհնեալ լինի Աստուծոյ անունը յաւիտենից մինչեւ յաւիտեան, որ իմաստութիւնը եւ զօրութիւնը ՆՐԱՆՆ Է: **21** ... նա է տալիս իմաստութիւն իմաստուններին, եւ հանճար՝ գիտնականներին: **22** Նա է խոր եւ ծածուկ բաները յայտնողը, որ գիտէ մութի մէջ եղածը, եւ լոյսը նորա հետ է բնակվում:*

## IV. ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐՏՈՒՄ Է ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ:

*Սաղմոս 111:10 – Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է. բարի խոհեմություն է բոլոր նրանց համար, ովքեր անում են այն. նրա օրհնությունը մնում է հավիտյան:*

- ***Խնդրիր երկնային Իմաստությունը:***

  *Յակ. 3:13-17 - **13** Ձեր մեջ ո՞վ է իմաստուն եւ խելացի, թող նա բարի վարքով ցույց տա իմաստությամբ և հեզությանբ կատարած իր գործերը: **14** Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակություն ունեք ձեր սրտերում, մի պարծեցք եւ սուտ մի ասէք ճշմարտութեան դէմ: **15** Այս իմաստությունը վերեւից իջած չէ, այլ երկրավոր է, մարմնավոր եւ դիվային: **16** Որովհետեւ ուր որ նախանձ եւ կռիվ կա, այնտեղ անկարգություն եւ ամեն չար բաներ կան:*

  ***17** Բայց վերին իմաստությունը նախ եւ առաջ սուրբ է, եւ հետո խաղաղարար, հեզ, հլու, ողորմությունով եւ բարի պտուղներով լիքը, անկողմնասէր, անկեղծ:*

- ***Փնտրեք Աստծո իմաստությունը մարդկանց հետ հարաբերություններում:***

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ